ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ՈՐՈՐԱՆ ԵՒ ԴԱՄՐԱՆ

Քոզ զորրանաւ մանկան խաղաղ ծիրանեգոյն սրփռեալ կայ,
Որ ճճաւոր 'ի մայրենի ծընդաց 'ի նիրհ քաղցրանոյշ՝
Ցերազանայ ըւրջ և անմեղ, և հիացմունք նախընծայ
Շող իբր յաստեղց մըչտակայից կաթեն 'ի դէմսն քընքոյշ։

Խորասուզեալ ընդ գալարեաք ծածկի հանգոյն և դամբան.
Փարին ուղէք ուռոյն զանիւ երերածուփ վայրահակ
Եւ վարդենւոյն՝ յոր պար գործօն մեղուաց 'ի հոյզ գան և գնան.
Անդ ջերմագուրթ մաղթանք, թրռչնոց անդ դայլայլիւք անուշակ։

Երկաքանչիւրն անրզդայից իսկ են 'ի խոկ մըտայոյզ.
Նոցուն՝ 'ի սիրտ մըտախոհին՝ գոն պահանջից իրաւունք.
Եւ ծանրարթուն ընկրղմեալ՝ կան հատեալ յանդորր և 'ի յոյս.
Միումն հրսկէ մայր ոք ընթեր, միւսումն խաչ առ մնարիւք։

Վարդակարմիր առաւօտուց աւետաւորք են անձնիւր.
Մանուկ 'ի սմա մատաղածին, 'ի նմին է մարդ անկենդան.
Որոցն այն ինչ զարթուցելոյ մանկան՝ աշխարհ իմն հանուր,
Եւ արդարոյն հանգուցելոյ չնորհէ զերկինքս դամբան։

ՎԻՈԼՈՒ

digitised by A.R.A.R.@